

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«__» մայիսի 2022թ.

N____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի
N 622-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 390-Ն
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու, Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի N 397-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 622-Ն որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու և վճարումներն ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 390-Ն որոշման 1-ին կետում «գանձման կազմակերպման և իրականացման» բառերը փոխարինել «վճարումներն ընդունելու» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 390-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշմամբ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին են պատվիրակվել Երևանի քաղաքապետի՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով նախատեսված լիազորությունները:

Մասնավորապես՝ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին են պատվիրակվել աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, աղբահանության վճարը գանձելու, ինչպես նաև աղբահանության վճարը հաշվարկողի կողմից սխալ հաշվարկելու դեպքում պակաս վճարված աղբահանության վճարի վճարման ժամանակացույց կազմելու լիազորությունները:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի N 390-Ն որոշմամբ այժմ ևս Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին են պատվիրակված անշարժ գույքի հարկի, հողի հարկի, փոխադրամիջոցների գույքահարկի, հողամասերի (այդ թվում՝ այգիներում և պուրակներում) բոլոր տեսակների վարձակալության և կառուցապատման իրավունքի վարձավճարների (այդ թվում՝ տույժերի և տուգանքների) գանձման կազմակերպումն ու իրականացումը:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 547-Ա որոշմամբ նախատեսվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունում կազմավորել

հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին, որի հիմնական գործառույթն է լինելու բոլոր ժամկետանց պարտավորությունների հավաքագրման (վարչական, դատական կարգով) իրականացումը: Նույն որոշմամբ Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերում լուծարվել են իրավաբանական բաժինները, որոնք զբաղվում էին նաև հարկերի, վճարների գանձման կազմակերպմամբ և իրականացմամբ:

Առաջարկվող կարգավորման բնույթ.

Նախագծով առաջարկվում է աղբահանության վճարի, անշարժ գույքի հարկի, հողի հարկի, փոխադրամիջոցների գույքահարկի, հողամասերի (այդ թվում՝ այգիներում և պուրակներում) բոլոր տեսակների վարձակալության և կառուցապատման իրավունքի վարձավճարների (այդ թվում՝ տույժերի և տուգանքների) ժամկետանց պարտավորությունների հավաքագրման (գանձման) լիազորությունները այլևս չպատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին, և նրանց իրավասության շրջանակներում թողնել միայն նշված գումարների հաշվարկման, հաշվառման և վճարումների ընդունման հետ կապված լիազորությունները:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից:

Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունումը Երևան համայնքում նախաձեռնված օպտիլացման և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտ քայլ է՝ գործառույթների կրկնությունը բացառելու ճանապարհին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 390-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն և 2021 թվականի մայիսի 25-ի N390-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 390-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն և 2021 թվականի մայիսի 25-ի N390-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ